ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

05 նոյեմբերի 2020 թվականի N 246 -Ա

ԷԴԳԱՐ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻ ԵՎ ՆԱՐԵԿ ԴԱՎԹՅԱՆԻ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2018թ. նոյեմբերի 8-ի N1239-Ն որոշումամբ հաստատված կարգով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմի ղեկավարի 2020 թվականի հոկտեմբերի 29-ի N 02/05.7/48378-2020 հանձնարարականը՝

ո ր ո շ ու մ ե մ.

1. Մարզպետարանի գլխավոր քարտուղար Էդգար Մարտիրոսյանին և ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ Նարեկ Դավթյանին 3 օրով՝ 2020թ. նոյեմբերի 5-ից 7-ը գործուղել ք. Երևան՝ ՀՀ ազգային ժողով՝ «Հայաստանի Հանրապետության 2021 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի նախնական քննարկումներին մասնակցելու նպատակով:

2.Մարզպետարանի սպասարկող անձնակազմի վարորդ Սեյրան Աղալոյանին՝ իրեն ամրակցված Հյունդայի Սոնատա մակնիշի 421 ԼԼ 60 պետհամարանիշի ավտոմեքենայով ապահովել տրանսպորտային միջոցով սպասարկումը:

3. Ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչությանը՝ սահմանված կարգով ապահովել գործուղման ծախսերի վճարումը:

4. Ն.Դավթյանին՝ գործուղումից վերադառնալուց հետո, եռօրյա ժամկետում, ներկայացնել հաշվետվություն գործուղման արդյունքների վերաբերյալ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ **Հ. ՊՈՂՈՍՅԱՆ**

2020թ. նոյեմբերի 05
ք. Կապան